14-20 ՆՈՅԵՄԲԵՐ 2025 ՈՒՐԲԱԹ 040(5864)

# Ազգ

Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## Հայագետ Յասմին Դում Թրագութին շնորհվել է պրոֆեսորի մասնագիտական կոչում

Ավստրիայի նախագահ **Ալեքսանդր Ֆան Դեր Բելլենի** հրամանագրով տոնական հատուկ արարողակարգով զալցբուրգցի հայագետ **Յասմին Դում Թրագութին** նոյեմբերի 12-ին շնորհվել է պրոֆեսորի մասնագիտական կոչում: Ավստրիական kathpress-ը հաղորդելով սույնը, նկատել է տալիս, որ Ավստրիայում հայագիտության հաստատմանն ուղղված՝ Դում Թրագութի տարիների ջանքերի ճանաչում է սա: Դում Թրագութն ավելի քան 35 տարի աշխատել է Հայաստանում և վերջին 20 տարիների ընթացքում հայագիտության ամբիոն է հիմնել Զալցբուրգի Փարիզ Լոդրոն համալսարանում: Նա ղեկավարում է Զալցբուրգում գտնվող «Քրիստոնյա Արևելքի ուսումնասիրության կենտրոնը» (ZECO): Յասմին Դում Թրագութը նաև «Պրո Օրիենտե» ( Pro Oriente ) հիմնադրամի խորհրդատու է և «Պրո Օրիենտե»-ի Զալցբուրգի բաժնի աշխատանքային հանձնախմբի անդամ:

⇨7

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգ · Աքունք Արեւ · Զարթօնք · Նոր Աշխարհ · Վարագիր · The Armenian Mirror-Spectator · Semanario Armenio SARDARABAD ՍԱՐԴԱՐԱՊԱՏ

### Ի պաշտպանություն ՌԱԿ ավանդապահ քաղաքականության

***Օրերս շրջանառության մեջ է դրվել՝ Հայ եկեղեցին, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայոց ազգային արժեքների ողջ համակարգը պղծելուն միտված մի գրություն, որը կրում է իրեն «ՌԱԿ կեդրոնական վարչութիւն» կոչող պատեհապաշտ մի խմբակի ստորագրությունը: Քստմնելի մի արարք՝ որը փորձում է շրջել 104 տարվա իր պատմությամբ հայտնի կազմակերպության ավանդական քաղաքականությունը:***

***Այդ կապակցությամբ ստորեւ ներկայացնում ենք զույգ հայտարարություններ, առաջինը՝ Ռամկավար Ազատական կուսակցության Համադրված մամուլի, իսկ երկրորդը՝ գրանցման փուլում գտնվող Հայ Ազգային Ռամկավար կուսակցության կողմից:***

***«Ազգ»***

**Զգուշանալ Ռամկավար Ազատական Կուսակցութեան անունը չարաշահող կեղծ յայտարարութիւններէ**

**Մենք որպէս աւանդապահ ռամկավարներ կը մնանք ազգային գերագոյն շահերու պաշտպանը**

**Կը մնանք Մայր Աթոռին եւ Հայոց ազգային պետականութեան անսակարկ դրօշակակիրները**

**Խստօրէն կը դատապարտենք մեր հայրենիքին մէջ ներկայ պժգալի փողոցային վիճակը ստեղծողները**

Մեր կուսակցութեան անունը չարաշահող ինքնահռչակ խմբակ մը, տարիներէ ի վեր, ժամանակ առ ժամանակ, յանկարծ կ՚արթննայ եւ կեղծիքով կը չարաշահէ Ռամկավար Ազատական Կուսակցութեան պանծալի անունը:

Վերջին օրերուն սոյն խմբակը իր խաչագողութիւնը թագադրած էր 11 նոյեմբեր 2025 թուակիր՝ «Զգաստութեան ստացին կոչ» վերնագրեալ բազմալեզու խեղկատակութեամբ մը, որուն մէջ յականէ անուանէ կը փորձէ թիրախաւորել Մայր Աթոռն ու անոր Գահակալը, ՀԱԵ-ի նուիրեալ կարգ մը միաբաններով հանդերձ:

Աւանդապահ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Համադրուած Մամուլի ներկայացուցիչներս, մեր գաղափարախօսութեան բազմահազար հետեւորդներուն, համակիրներուն եւ ընթերցողներուն անունով խստիւ կը դատապարտենք, անձնական մանր խնդիրներով թէ քաղաքական քինախնդիր ու ճղճիմ հաշուարկներով առաջնորդուող պատեհապաշտներու այդ արհամարհելի խմբակին անընդունելի եւ այպանելի վարքը:

Նշեալ խմբակին արկածախնդրութիւններուն եւ մեքենայութիւններուն ծանօթ եւ անծանօթ հանրութեան անգամ մը եւս կու գանք հաստատելու, որ մեր պանծալի կուսակցութեան շարքերուն բացարձակ մեծամասնութիւնը չի ճանչնար ինքզինք «Կեդրոնական Վարչութիւն» կոչած այդ հերձուածը, որ ոչ իսկ հիւլէի մը չափ գոյութիւն ունի մեր օրերու ազգային տագնապալի վիճակի բարելաւումին նպաստելու անհրաժեշտ համազգային աշխատանքին մէջ: Մինչ անոր իրական թէ երեւակայածին անդամները հազիւ իրենք իրենց անձերը կը ներկայացնեն: Հետեւաբար ամէն ինչ, որ լոյս կը տեսնէ այդ խմբակին կողմէ, պարզապէս առ ոչինչ է:

Հիմնուելով վերոյիշեալին վրայ՝ կ՚ուզենք շեշտել, որ մե՛նք՝ աւանդապահ Ռամկավար Ազատականներս, հաւատարիմ մեր աւելի քան հարիւրամեայ անխախտ ուղեգիծին, կը շարունակենք անսակարկ դրօշակակիրները մնալ Մայր աթոռին ու մեր պետականութեան եւ այս ազգային երկու անսակարկելի արժէքներուն գործնապէս, մեր մամուլով եւ առարկայական գործունէութեամբ, կը հանդիսանանք անոնց պաշտպանը ամէն տեսակի ոտնձգութիւններու դէմ:

Պէտք է անմիջապէս դադարեցնել ներկայ պժգալի փողոցային ու անօրէն վիճակը ու վերադառնալ ազգային միասնականութեան գաղափարախօսութեամբ առլցուն աշխատանքի:

**Ռամկավար Ազատական Կուսակցութեան**
**Համադրուած Մամուլ**
**12.11.2025**

# «ՆԱՏՕ-ակա՞ն, թե՞ Զանգեզուրյան» միջանցք

## Ադրբեջանի անդամակցությունը ՆԱՏՕ-ին՝ Անգլոսաքսոնական ճակատի կարեւոր քայլ Հարավային Կովկասում

**ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**Արտակարգ եւ լիազոր դեսպան**

Նոյեմբերի 7-ին Բաքու այցելած Հյուսիսատլանտյան դաշինքի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ **Իլհամ Ալիեւը** հայտարարել է, որ ադրբեջանական բանակը համապատասխանեցվում է ՆԱՏՕ-ի չափանիշներին եւ հավաստիացրել է, որ շարունակվելու է բանակի արդիականացման գործընթացը:



Թուրքիայի զինված ուժերի հետ ադրբեջանական բանակի սերտ համագործակցության մասին Ալիեւի հայտարարությունը նույնպես ասվել էր այդ համատեքստում: Ալիեւը նաեւ ՆԱՏՕ-ի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ խոսել է երկրի առջեւ դեռ նախորդ դարասկզբից դրված գերնպատակին հասնելու՝ «օկուպացված հողերն ազատագրելու» մասին:

Իլհամ Ալիեւի՝ ՆԱՏՕ-ի 15 անդամ երկրների ներկայացուցիչների հետ հանդիպումը կարելի է գնահատել որպես ոչ սովորական դիվանագիտական իրադարձություն՝ շարունակություն այն երկարաժամկետ գործընթացի, որը մեկնարկել է դեռեւս 1994 թվականից՝ ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակում: Սակայն այժմ այն ձեռք է բերում ավելի հստակ քաղաքական եւ անվտանգային ուղղվածություն:

Եվրոպական երկրների եւ ԱՄՆ-ի ներկայացուցիչների մասնակցությունն այս հանդիպմանը եւ Բաքվի՝ ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխանեցնելու ձգտումները վկայում են Արեւմուտքի վճռականության մասին՝ Իրանի հյուսիսային սահմանների երկայնքով ռազմական եւ հետախուզական համագործակցությունը խորացնելու հարցում, ինչը չէր կարող չմտահոգել Թեհրանին:

Մի առիթով Իրանի Գերագույն առաջնորդի գլխավոր խորհրդական **Վելայաթին** ասել է, որ «եթե ՆԱՏՕ-ն մոտենա Իրանի հյուսիսային սահմաններին, Իրանը կանխարգելիչ քայլերի կդիմի»:

⇨3

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ժողովուրդը մեր հոգին է, իսկ հավատքը՝ մեր շունչը: Երբ ոմանք փորձում են խլել այդ երկուսը մեզնից, մենք պարտավոր ենք խոսել՝ առանց վախի, առանց երկմտանքի:

Վերջին օրերին կրկին լսվում են ձայներ իրենց «Ռամկավար Ազատական Կուսակցություն» կոչող մի խմբակից, որը համարձակվում է ուսուցանել մեր Սուրբ Եկեղեցուն, մասնացույց անել մեր Վեհափառին ու դատել այն ամենը, ինչը մնացել է մեզ որպես վերջին սրբություն: Այդ ձայները գալիս են այն միջավայրերից, որոնք տարիներ շարունակ լռեցին, երբ վտանգվում էր Արցախը, երբ խարխլվում էին մեր պետականության հիմքերը, երբ մեր հավատքի վրա ստվեր էր գցվում:

Մենք՝ Հայ Ազգային Ռամկավար կուսակցությունը, հռչակում ենք հստակ.

Արցախը մեր պատիվն է, մեր խիղճը եւ մեր հավիտենական պարտքը:

Արցախը չի կարելի վաճառել, մոռանալ կամ փոխանակել որեւէ բանի հետ: Նա մեր զոհված տղաների գերեզմանների ու նրանց մայրերի արցունքների անունն է:

Մենք չենք հանդուրժի, որ նրանք, ովքեր մոռացան այդ անունը, այսօր խոսեն ժողովրդի ու Եկեղեցու անունից:

Հայ Եկեղեցին քաղաքական շահերի խաղալիք չէ, այլ՝ մեր ազգային ինքնության անսասան բերդը:

Ցեղը, որ մոռանա իր հավատքը, կորցնում է իր կերպարը:

Մենք չենք մոռանա: Մենք չենք զիջի: Մենք կպահենք այն, ինչ ունենք՝ հանուն նրա, ինչը պիտի վերականգնենք:

**Հայ Ազգային Ռամկավար կուսակցություն**
**(Գրանցման գործընթացում)**

*Երեւան*
*11 Նոյեմբերի, 2025 թ.*

# Օֆ-Օֆ...

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Այն ժամանակ, երբ Ադրբեջանում դաշնակիցներով տոնում էին հայերի դեմ հաղթանակի հինգ տարին (Էրդողանի ձեւակերպումն է) ու ռազմական շքերթ անում այդ առթիվ, Հայաստանում ուռեցվում էր Ադրբեջանով ղազախական ցորենի ներկրման առաջին գնացքի Հայաստան մտնելու թեման՝ այդ առթիվ իշխանավորների հրճվանքը եւ իշխանության ընդդիմախոսների քննադատությունը հունցելով: Ցորենից լրատվական սկանդալ փչել հաջողվեց: Անգամ պարզվեց՝ մասնավոր մեկի բերած եսիմորկարգի ցորենը աշխարհաքաղաքական հետք էլ ունի, թե բա՝ **Պեսկովը** հաստատում է ռուսական հետախուզական տվյալները, որ Հայաստանն ուզում է հրաժարվել ռուսական ցորենից եւ ուկրաինական ցորեն գնել: **Նիկոլ Փաշինյանն** էլ պասը հետ փոխանցեց՝ ռուսական ցորենից էլ չենք հրաժարվի, մյուս ցորեններից էլ:

Մինչ այդ էլ հարցազրույցներով խոսել էին բոլորը՝ **Սերժ Սարգսյանը**, **Ռոբերտ Քոչարյանը**, անգամ նորահայտ կարապետյանական ընդդիմության ներկայացուցիչն էր ամերիկացի ճանաչված մեկնաբան **Թաքեր Կարլսոնին** (բա) հարցազրույց տվել, ու այս բոլորը՝ միաժամանակ, կարծես մի թաքուն շարժառիթից բխած, իշխանությանը ու նրա ղեկավարին նորից ու նորից հասցեագրելով պատերազմ հրահրելու մեղադրանքից սկսած մինչեւ Արցախը հանձնելու, պատերազմը դադարեցնելու հնարավորությունը չօգտագործելու մեղադրանք: Ի պատասխան ստանալով նույն տրամաչափի մեղադրանքներ, սպիտակ բոթասների մասին հիշեցումից՝ մինչեւ պետական միջոցներով ընտանեկան բյուջեների մեծացում, Արցախի հարցն իրենց պաշտոնավարման ընթացքում չլուծելու եւ այլն:

Գումարվել էր նաեւ Արծվաշենը վերադարձնելու մասին վարչապետի գրառումը՝ այդ թեմայով օվերտոնի պատուհան բացելու ակնհայտ ենթատեքստով (եւ, այո՛, դա բացվեց):

Եւ ի՞նչ: Հերթական անգամ այս բոլորը, որոնց սինքրոն զուգահեռումը մտորելու տեղիք է տալիս, մտածված, թե ակամա՝ գոնե լրահոսի մակարդակով ծածկեց ԱԺ լիագումար նիստում այս իշխանության վերջին բյուջեի քննարկումը (Նիկոլ Փաշինյանին ե՛ւ ԱԺ-կառավարություն հարցուպատասխանին, ե՛ւ լրագրողների հետ ճեպազրույցում այդ հարցերն էին ուղղվում), ե՛ւ 44-օրյա պատերազմում պարտության հինգերորդ տարելիցի առթիվ պատասխանատուների մասով մի անգամ եւս գնահատական ունենալու առիթը բաց թողնվեց խորհրդարանում, այդպիսով հեռացնելով սլաքները բյուջետային քննարկման ամենակարեւոր շեշտադրումներից՝ արտաքին ու ներքին ահռելի պարտք, սոցիալական ցուցանիշների՝ թվերով բարելավված, իրական կյանքում սրված վիճակ, ժողովրդագրության բացասական հաշվեկշիռ: Հարցեր, որոնց փոխարեն լրագրողները վարչապետին հարցնում էին Սարգսյանի եւ Քոչարյանի հարցազրույցների՝ վերջին յոթ տարում անվերջ կրկնվող մեղադրանքներից, ի պատասխան ստանալով Փաշինյանի՝ տարիներ անվերջ կրկնվող հակամեղադրանքները, գումարած՝ Արծվաշենի, անկլավների փոխանակման ու ցորենի թեմաները:

Ստացվեց այն, ինչ ստացվում է միշտ վերջին տարիներին՝ ոչ ոք առանձնապես չի կենտրոնանում հանրության, ու ոչ թե նեղ խմբերի համար կարեւորի վրա, որի համար պետք է պատասխան տա որեւէ կառավարություն՝ մարդկանց կյանքի բարելավման, երկրի տնտեսության զարգացման համար, որին կոչված են գործադիրն ու նրա ղեկավարն առաջին հերթին:

Հա դե՝ պետք է հանրությանն այնպես խճողել, որ չզգա իր կարիքները մոտակա ընտրություններից առաջ, ու դրանց համար պատասխանատուներին հարցեր չուղղի, այս մի քանի ամիսն էլ անվթար անցնեն, ու ժամանակը գլորվի դեպի ընտրություններ, դրան ոչինչ չխանգարի (իշխանությունը կարծես արդեն հերթական ընտրություններին է հակվում, թեեւ մեր տեղեկություններով իշխանության ներսում դեռ լիովին չեն հրաժարվել արտահերթի գաղափարից): Որ ոչ ոք պատասխանատվություն չպահանջի նաեւ պատերազմի պատասխանատուներին անվանելու քաջությունը չունեցած ԱԺ քննիչ հանձնաժողովի զեկույցը ջրելու համար, Հայաստանի արտաքին եւ ներքին պարտքն ահռելի թվերի հասցնելու համար, սոցիալական ընդհանուր պատկերը առարկայորեն չբարելավելու համար եւ այլն:

Մարդկանց զբաղեցնելու լրատվաքաղաքական հարայ-հրոցն, ինչպես միշտ այս տարիներին, ստացվեց, ապրե՛ք, հետո էլ ասում են՝ Հայաստանում միասնություն չկա:

Վերը նկարագրվածը հատկապես լավ է երեւում ռեպորտաժային Հայաստանում: Վերլուծական Հայաստանում, իհարկե, միշտ էլ փորձեր կան իրողությունները տեղ հասցնելու, ֆարսն իրականությունից տարբերելուն օգնելու, բայց լրատվական աղմուկն արդեն վաղուց թույլ չի տալիս մարդկանց բովանդակություն ընկալել լրատվական հարահ-հրոցի տակ, փնտրել պատասխաններ, չմնալ քարոզչական մամլակներին գերի, մեր հանրությունը խճողվել է ռեպորտաժային Հայաստանում, որը կից է քաղաքական Հայաստանին:

Իսկ ԱԺ դահլիճում իշխանականները խաղաղությունից էին խոսում, առանց սահմանային զոհերի վիճակագրությունից, ժողովրդավարությունից, Թրամփի ուղին իրականացնելու արագ ժամկետներից, թե բա՝ եկող տարվա սկզբին բոլոր համաձայնությունները կլինեն, կհետեւի շինարարությունը: Բյուջեի բարվոք թվեր էին ներկայացնում, խոսում նրանից, որ պարտքը կառավարելի է, պարտք տալիս են նորմալ տնտեսություն ունեցողին, իրենց իշխանության գալու սկզբի համեմատ՝ բյուջեն երկուսուկես անգամ ավելացնելուց, ու անգամ՝բեկումնային, ճեղքում առաջացնող բյուջե անվանեցին նախագիծը: Ընդդիմադիրներին էլ անվանում էին սպառված (**Ալեն Սիմոնյան**):

Մինչդեռ ընդդիմադիրները նշում էին ահռելի արտաքին՝ տասնչորս միլիարդ դոլարի հասնող պետական պարտքի մասին, որով ոչ մի հավելյալ արժեք չի ստեղծվել, ոչ մի ռազմավարական օբյեկտ չի կառուցվել (**Աննա Գրիգորյան**), որի սպասարկման համար միայն եկող տարի պետք է լինելու մեկ միլիարդ դոլարից ավելի գումար, ներքին պարտքն անընդհատ մեծացել է, սոցիալական վիճակը չի բարելավվել՝ աշխատող մարդկանց յոթանասուն տոկոսը միջին աշխատավարձից ցածր է վաստակում, պաշտպանության համար նախատեսվող գումարը նվազել է, իսկ իշխանությունը չի կատարել տնտեսական բլոկի խոստումները (**Արթուր Խաչատրյան**): Եկող տարվա բյուջեի նախագիծը **Արծվիկ Մինասյանն** անվանեց հույսերի, նպատակների ձախողման բյուջե:

ԱԺ պատգամավորների տաք ելույթները մեր հրապարակումը պատրաստելու պահին շարունակվում էին՝ **Հայկ Կոնջորյանը** խոսում էր հավաքական Սերժից, հավաքական Քոչարյանից, ֆանտոմներից, քաղաքական ատամհատիկ անողներից: Քննարկման ավարտին՝ Փաշինյանն էլի ընդդիմությանն անվանեց այլ երկրի ազդեցության գործակալներ՝ այլ երկրի գրպանում հայտնվելը բարդելով Արցախի հարցի վրա եւ պնդելով, որ Հայաստանը դուրս է բերվել այդ թակարդից: Պարտքն էլ ութ միլիարդով ավելանալու պատասխանը՝զենք է գնվել, եւ շատ, քովիդ է հաղթահարվել եւ այլն:

Իսկ մենք հանրության հետ առօրյա շփումներից հեռու մեր պատգամավորներին տեղեկացնենք՝ դրանք այլեւս եւ վաղուց առաջվա ազդեցությունը չունեն իրենց հոգսի մեջ խորը խրված հանրության վրա, որքան էլ իշխանությունն ու ընդդիմությունը նոր, գրավիչ ու հնարամիտ տրյուկներ մտածեն ու սրեն իրենց բառապաշարը:

Մեր հոգնած հանրության մեծ մասի համար, հայտնի երգի նման, ո՛չ դարն է ավարտվում՝ ի դեմս անցյալը վերադարձնել փորձող ընդդիմադիր լիդերների, ո՛չ էլ ներկա «վոժդն» է փոխվում՝ «վոժդը» ապագայում էլ փոխվելու ոչ մի նշան ցույց չի տալիս:

*Հ.Գ.- Ընդդիմադիր լրագրողներին մի՛ ձերբակալեք, պարոնայք իշխանավորներ, ինչ էլ ասած լինեն նրանք, խոսքը արարքին մի հավասարեցրեք, բա թե՝ խուլիգանություն, չէ՞ որ ձեզնից շատերն անցյալում լրագրող էին ու ժամանակին ինչ ասես ասել են իշխանավորների հասցեին, շատ շուտ մոռացաք:*

# «Հայաստանն, ըստ երեւույթին, մարտահրավեր է նետում կրոնական ազատությանը»

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Անցյալ շաբաթ Վիեննայում կայացել է Ավստրիայի կաթոլիկ եպիսկոպոսների աշնանային լիագումար ժողովը՝ Հայ առաքելական եկեղեցու, Ասորի ուղղափառ եւ Ղպտի ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչների հետ, որ ուշադրություն է բեւեռել Ավստրիայում եւ իրենց ծագման երկրներում եկեղեցիների եւ նրանց անդամների վիճակին: Սույն իրադարձությունը լուսաբանող Ավստրիայի կաթոլիկների լրատվական գործակալությունը՝ kathpress-ը նոյեմբերի 7-ին հաղորդում է, որ Ավստրիայի կաթոլիկ եպիսկոպոսներն իրենց համերաշխությունն են հայտնել Ավստրիայի Արեւելյան ուղղափառ եկեղեցիներին, մասնավորապես՝ Հայաստանի եկեղեցուն:

Հայ առաքելական եկեղեցու արքեպիսկոպոսներ **Միքայել Աջապահյանի**, **Բագրատ Գալստանյանի**, եպիսկոպոս **Մկրտիչ Պռոշյանի** բանտարկությունը «հարձակում է հավատացյալների համայնքի վրա», գրում է kathpress-ը՝ ուրբաթ՝ նոյեմբերի 7-ին հրապարակված հայտարարության տեքստից մեջբերում անելով: Ըստ նույն աղբյուրի, «եպիսկոպոսները խոր հիասթափություն եւ ցավ են հայտնել Հայաստանում ստեղծված իրավիճակի վերաբերյալ՝ արքեպիսկոպոսներ Միքայել Աջապահյանի եւ Բագրատ Գալստանյանի, եպիսկոպոս Մկրտիչ Պռոշյանի եւ ծխական քահանա Գարեգին Արսենյանի բանտարկության կապակցությամբ»: Ավստրիայի կաթոլիկական գործակալության լրատվականը ծանուցում է, որ արքեպիսկոպոս Աջապահյանն արդեն դատապարտվել է երկու տարվա ազատազրկման, մյուս հոգեւորականները նախնական կալանքի տակ են: Ավստրիացի եպիսկոպոսները կարծիք են հայտնել, որ Հայաստանը, ըստ երեւույթին, «մարտահրավեր է նետում կրոնական ազատությանը՝ սույնը համարելով օրենքի գերակայության եւ մարդու իրավունքների խախտում, ինչպես նաեւ «հարձակում կրոնական համայնքի վրա»: Նրանք կոչ են անում աղոթել իրենց հոգեւորական եղբայրների շուտափույթ ազատ արձակման համար:

Վիեննայում կայացած ժողովի ժամանակ եպիսկոպոսները կարծիք են հայտնել, թե Հայ առաքելական եկեղեցին «խղճի եւ հասարակության ձայնն է Հայաստանում»՝ խորապես նվիրված խաղաղությանը, արդարությանը եւ հաշտեցմանը: Եկեղեցու «մարգարեական» խոսքը «երբեք ժողովրդի դեմ չէ, այլ ուղղված է նրա բարեկեցությանը եւ բոլոր մարդկանց արժանապատվությունը հարգելուն»: Ժողովին ներկա եպիսկոպոսներն ընդգծել են, որ «անհրաժեշտ է ապահովել եկեղեցու՝ իր առաքելությունը «ազատորեն եւ առանց խոչընդոտների իրականացնելու իրավունքը»:

Եպիսկոպոսներն իրենց հայտարարության մեջ անդրադարձել են նաեւ Արցախից 2 տարի առաջ 120 000 հայերի բռնի տեղահանությանը, Ադրբեջանի՝ հայոց բնօրրանում հայկական քրիստոնեությունը շարունակական եւ համակարգված կերպով ոչնչացնելուն: Եկեղեցիները, վանքերն ու գերեզմանատները վնասվում կամ քանդվում են՝ «ջնջելու համար այն ամենը, ինչը մարդկանց հիշեցնում է հայոց ներկայության մասին»:

⇨3

# «Հայաստանն, ըստ երեւույթին, մարտահրավեր է նետում կրոնական ազատությանը»

⇨2 Հիշեցնենք, որ «**Ազգի**» հոկտեմբերի 24-ի համարում անդրադարձել ենք Ավստրիայի եկեղեցիների էկումենիկ խորհրդի՝ ՀՀ-ում հոգեւորականների դեմ (պատժիչ) գործողությունները դատապարտող հայտարարությանը, ինչպես նաեւ Հայ առաքելական եկեղեցուն եւ Հայաստանի ողջ քրիստոնեական համայնքին ուղղված կուռ համերաշխությանը:

Քրիստոնեական համերաշխություն միջազգային կազմակերպությունը (CSI) նոյեմբերի 1-ին հրապարակել է հոկտեմբեր ամսվա զեկույցը՝ ուշադրությունը բեւեռելով Նիգերիայում քրիստոնյաների հանդեպ հալածանքների, Հայաստանում հարձակումների ենթարկվող հայ առաքելական եկեղեցու վրա:

«Հայաստանի կառավարությունը խստացնում է եկեղեցու նկատմամբ հալածանքները, ձեւակերպում է ՔՀՄ կազմակերպությունն իր զեկույցում, ներկայացնելով այն փաստը, որ Հայ առաքելական եկեղեցու դեմ սուր արշավի պայմաններում ձերբակալվել են հոգեւորականներ՝ աշխարհիկ աշխատակիցների հետ միասին: Անվտանգության ուժերը խուզարկություններ են իրականացրել Արագածոտնի թեմում՝ ձերբակալելով Մկրտիչ եպս. Պռոշյանին, նրա 12 քահանաներին եւ մի շարք եկեղեցական աշխատողների: Հաջորդ օրը բոլոր ձերբակալվածները ազատ են արձակվել, բացառությամբ՝ Պռոշյան սրբազանի, Գարեգին Արսենյան անունով քահանայի եւ թեմի հաշվապահի: Այս երեք տղամարդկանց քաղաքական մեղադրանք է առաջադրվել՝ իրենց ընդդիմադիր գործունեության հետ կապված: Անվտանգության դիմակավորված գործակալները ձերբակալել են նաեւ հունիսից անազատության մեջ գտնվող Բագրատ արք. Գալստանյանի փաստաբանին: Հոկտեմբերի 3-ին մեկ այլ արքեպիսկոպոս՝ Միքայել Աջապահյանը դատապարտվեց երկու տարվա



*Ավստրիայի եպիսկոպոսաց ժողովի անդամների հանդիպումը Արեւելյան ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչների հետ: Ձախից աջ՝ եպիսկոպոսներ Անբա Գաբրիելը, Տիրան Պետրոսյանը, Էմանուել Այդինը: Լուսանկարը՝ kathpress-ի:*

ազատազրկման՝ մամուլին տրված մեկնաբանությունների համար, ծանուցում է Քրիստոնեական համերաշխություն միջազգային կազմակերպությունն իր կայքում զետեղված զեկույցում եւ շարունակում՝ «ձերբակալությունները լրացնում են Հայաստանում քաղբանտարկյալների ընդլայնվող ցանկը, որի մեջ է մտնում նաեւ **Սամվել Կարապետյանը**՝ ռուսաստանաբնակ հայտնի հայ գործարար, որ հեռուստատեսային մի հարցազրույցում պաշտպանել է եկեղեցին: Վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** կառավարությունը տարաձայնություններ ունի եկեղեցու հետ՝ Լեռնային Ղարաբաղի էթնիկ զտումներին արձագանքելու հարցում: Եկեղեցին հրապարակավ աջակցում է ղարաբաղցի հայերին՝ իրենց բնօրրան հայրենիք վերադառնալու իրավունքն իրացնելու հարցում: Իսկ Փաշինյանը հայտարարել է, որ Ղարաբաղի հարցը «փակված» է եւ վերադարձի մասին խոսակցությունները «վտանգավոր»՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ներկայում ընթացող խաղաղության գործընթացի համար»:

ՔՀՄ կազմակերպության հոկտեմբեր ամսվա ամփոփիչ զեկույցում հիշեցում կա, որ հոկտեմբերի 11-ին իրենց փոդքասթում անդրադարձել են Արցախից բռնի տեղահանմանը, արցախցիների հայրենի տուն վերադառնալու շարունական բուռն ցանկությանը: «**Ազգի**» հոկտեմբերի 17-ի համարում անդրադարձել ենք վերոհիշյալ փոդքասթին:

# «ՆԱՏՕ-ակա՞ն, թե՞ Զանգեզուրյան» միջանցք

⇨1 Ընդհանրապես Իրանում «ՆԱՏՕ-ի միջանցք» բառակապակցությունը համարվում է «Զանգեզուրի միջանցքի» հոմանիշ, հետեւաբար այդ միջանցքի նկատմամբ վերաբերմունքը նույնն է:

Իրանի նախկին նախագահ **Էբրահիմ Ռայիսին** դեռեւս 2023 թ. հոկտեմբերին՝ Իլհամ Ալիեւի հատուկ ներկայացուցիչ **Խալաֆ Խալաֆովի** եւ Հայաստանի Անվտանգության խորհրդի քարտուղար **Արմեն Գրիգորյանի** հետ հանդիպումների ընթացքում հայտարարել էր, որ «Իրանը դեմ է ՆԱՏՕ-ի ներկայությանը Հարավային Կովկասում, քանի որ ՆԱՏՕ-ն սպառնալիք է տարածաշրջանի երկրների անվտանգությանը, եւ «Զանգեզուրի միջանցքը» կարող է նմանատիպ վտանգներ առաջացնել»:

Գնահատելով իրավիճակը՝ իրանցի քաղաքական վերլուծաբան **Ահմադ Քազեմին** նշել է, որ «թուրքական ՆԱՏՕ»-ի գաղափարը կյանքի կոչելու նպատակով Ադրբեջանի անդամակցությունը դաշինքին կդառնա անգլոսաքսոնական ճակատի ամենակարեւոր քայլը Կովկասում՝ Իրանի, Ռուսաստանի եւ Չինաստանի դեմ նոր կարգ հաստատելու համար»: Վերլուծաբանի գնահատմամբ, «այս գործընթացը, ի տարբերություն Վրաստանում, Ուկրաինայում, Շվեդիայում եւ Ֆինլանդիայում տեղի ունեցող զարգացումների, կընթանա ավելի արագ՝ իր մեջ պարունակելով անսպասելիության տարրեր»:

Իրանի գնահատմամբ՝ վերջին զարգացումները Հարավային Կովկասում ցույց են տալիս, որ Ադրբեջանի եւ նրա արեւմտյան հովանավորների հիմնական նպատակը «Զանգեզուրի միջանցքի» կամ «Թրամփի ուղու» գործարկումն է:

Ըստ անկախ վերլուծաբանների՝ այս զարգացումն Իրանի եւ Ռուսաստանի համար ունի հստակ հետեւանք. այն կարող է սահմանափակել երկու երկրների ռազմավարական խորությունը հյուսիս-արեւմուտքում եւ կտրել Իրանի ցամաքային կապը Հայաստանի հետ:

Եթե այս միջանցքը գործարկվի, Իրանը կզրկվի ուղիղ հասանելիությունից դեպի Հյուսիսային Կովկաս եւ նույնիսկ դեպի Եվրասիական շուկա:

Բացի այդ, Թուրքիայից եւ ԱՄՆ-ից ստացած աջակցությամբ Բաքուն կարող է ՆԱՏՕ-ի ռազմական համագործակցության շրջանակում ազդել նաեւ Կասպից ծովի էներգետիկ անվտանգության եւ գազի ու նավթի տարանցման ուղիների վրա:

Բոլոր փաստերը վկայում են, որ վերջին երկու տարիներին Ադրբեջանը որդեգրել է անվտանգության համակցված դիվանագիտության նոր մոդել, որտեղ ակտիվ արտաքին քաղաքականությունը համատեղվում է լայնածավալ սպառազինությունների գնումների եւ զինված ուժերի կառուցվածքային արդիականացման հետ: Այս քաղաքականությունը կարելի է դիտարկել որպես ընդհանուր ռազմավարության մաս, որի նպատակն է բարձրացնել զսպման կարողությունը եւ ամրապնդել Բաքվի աշխարհաքաղաքական դիրքը Հարավային Կովկասի եւ հարակից անվտանգության միջավայրում:

Այս ռազմավարության բաղադրիչներն են՝ բազմաշերտ հակաօդային պաշտպանության համակարգերի զարգացումը, հրետանային եւ զրահատանկային կարողությունների ուժեղացումը, հետախուզական եւ բարձր ճշգրտության հարվածային հնարավորություններով անօդաչու համակարգերի ենթակառուցվածքների ընդլայնումը, ինչպես նաեւ կրթական եւ կիբեռանվտանգության ոլորտներում համագործակցության խորացումը ՆԱՏՕ-ի եւ նրա հիմնական գործընկերների՝ Թուրքիայի, Պակիստանի եւ մի շարք եվրոպական երկրների հետ:

Այս գործընթացը փաստացի արտացոլում է Ադրբեջանի ձգտումը՝ անցում կատարել տարածքային մեկուսացման վրա հիմնված անվտանգությունից դեպի տարածաշրջանային ակտիվ անվտանգություն. մի գործընթաց՝ որը ոչ միայն վերաիմաստավորում է ուժերի հավասարակշռությունը Հարավային Կովկասում, այլեւ մեծացնում է լարվածության աշխարհաքաղաքական գինը եւ սահմանափակում հարեւանների՝ հատկապես Իրանի, Հայաստանի եւ Ռուսաստանի ռազմավարական ընտրանքները:

Տարածաշրջանային իրադարձությունները վերլուծական հոդվածների տեսքով իր ընթերցողին ներկայացնող «***Իսլամական աշխարհի զարգացումներ***» կայքը վերջին հրապարակումներից մեկում՝ ՆԱՏՕ-ի պատվիրակության Բաքու այցելության առիթով անդրադարձել է Ադրբեջանի նոր անվտանգային ռազմավարությանը՝ ներկայացնելով տեղեկություններ Թուրքիայից, Պակիստանից եւ Իսրայելից առաջադեմ սպառազինություններ ձեռք բերելու, հակաօդային համակարգերը զարգացնելու, ինչպես նաեւ ՆԱՏՕ-ի հետ տեխնիկական ու կրթական համագործակցության միջոցով Հարավային Կովկասում ազդեցիկ ուժ դառնալու Բաքվի ջանքերի մասին:

Կայքը տեղեկություններ է հրապարակել Ադրբեջանի կողմից ռազմական տեխնիկա ձեռք բերելու աշխարհագրության վերաբերյալ: Օրինակ՝ նշվում է, որ Բաքուն Սերբիայից ձեռք է բերել 48 միավոր Nora B-52NG ինքնագնաց հրետանային համակարգ, իսկ զուգահեռաբար՝ իսրայելական Barak-MX առաջադեմ հակաօդային համակարգեր, ինչը վկայում է բազմաստիճան պաշտպանական «գմբեթ» ստեղծելու եւ հրթիռային ու անօդաչու սպառնալիքների նկատմամբ խոցելիությունը նվազեցնելու ուղղությամբ Ադրբեջանի ծրագրերի մասին:

Օդային ուժերում Թուրքիայի եւ Պակիստանի հետ համատեղ հարվածային ինքնաթիռների եւ անօդաչուների ձեռքբերումը, ըստ իրանական կայքի, վկայում է ցանցակենտրոն պատերազմի դոկտրինի ձեւավորման մասին, որտեղ նվազում է մարդկային գործոնի դերը եւ աճում է տեխնոլոգիական կախվածությունը:

Կայքի գնահատմամբ՝ Պակիստանի հետ խորացող համագործակցությունը JF-17 Thunder կործանիչների գնման եւ ուսուցման հարցում դիտարկվում է որպես տեղական օդային ուժերի ձեւավորման եւ տարածաշրջանային սպառնալիքներին զսպման քայլ:

Ընդ որում, այս կապը կայքի կողմից գնահատվել է ե՛ւ որպես ռազմական, ե՛ւ իբրեւ Իսլամաբադ-Անկարա-Բաքու առանցքի ռազմավարական համադրման վկայություն, որը երկարաժամկետ հեռանկարում կարող է հանգեցնել Եվրասիայում նոր ռազմական բլոկի ձեւավորմանը:

2024-2026 թթ. պաշտպանական բյուջեի միլիարդավոր դոլարների հատկացումը, ըստ իրանական կայքի, ցույց է տալիս տնտեսության աստիճանական ռազմականացման եւ կոշտ անվտանգության գերակայությունը՝ դասական դիվանագիտության նկատմամբ: Սա հաստատվում է Ադրբեջանի կառավարության պաշտոնական տվյալներով՝ տարեկան պաշտպանական բյուջեի 15-20% աճով եւ Իսրայելի ու Թուրքիայի հետ կնքված խոշոր սպառազինությունների պայմանագրերով:

Միաժամանակ, Արեւմուտքի անվտանգության կառույցների հետ համագործակցության շրջանակում, հատկապես ՆԱՏՕ-ի պաշտպանական կրթական ծրագրերի միջոցով, Ադրբեջանը վերաիմաստավորել է իր կրթական, կառավարչական եւ դոկտրինալ կարողությունները: Այս գործընթացն ուղեկցվում է կիբեր եւ տեխնիկական համագործակցության ընդլայնմամբ եվրոպական եւ տարածաշրջանային պետությունների հետ, ինչը աստիճանաբար Ադրբեջանի պաշտպանական հաստատությունները մոտեցնում է ՆԱՏՕ-ի չափանիշներին:

Ադրբեջանի այս քայլերը ոչ միայն ռազմական, այլեւ հստակ քաղաքական ուղերձ ունեն՝ ամրապնդել կապերը Արեւմտյան անվտանգության բլոկի հետ, ստեղծել հակակշիռ Ռուսաստանի եւ Իրանի ճնշումներին եւ հաստատել Բաքվի դերը՝ որպես ակտիվ խաղացող նոր ձեւավորվող Հարավային Կովկասի անվտանգության ճարտարապետության մեջ:

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Ալեքսանդր Գրեբեշկով. Պատկերել Հայաստանն իրական գամմայով

*ԵՐԵՎԱՆ - Ռուս լուսանկարիչ **Ալեքսանդր Գրեբեշկովը** ծնվել է Մոսկվայում, 1984 թվականին: Պատանեկությունից զբաղվել է կարատեով, ընդունվել է սպորտի քոլեջ, հետագայում շարունակել ուսումը համալսարանի սպորտի ֆակուլտետում: Սակայն այդ մասնագիտությամբ երբեք չի աշխատել եւ շուտով սկսել է լուսանկարել: Սկզբում ստեղծել է դիմանկարներ, ակումբային եւ աշխարհիկ լուսանկարներ: 2010-ին նա առաջին անգամ իրականացրել է վավերագրական նկարահանում: Այդ աշխատանքներով նա Մոսկվայի լուսանկարչության տան մրցույթում զբաղեցրել է երկրորդ տեղը, ինչի շնորհիվ երկու ամսով ուղարկվել է ստեղծագործական գործուղման Փարիզ: 2022 թվականից Ալեքսանդրը բնակվում եւ ստեղծագործում է Երեւանում: Նրա անձնական կայքէջն է՝ https://www.grebeshkov.net/:*

**-Սիրելի՛ Ալեքսանդր, մեր զրույցը սկսենք լուսանկարիչ Ժիզել Ֆրոյնդի խոսքերով. «Լուսանկարը կարող է միաժամանակ լինել ե՛ւ փաստաթուղթ, ե՛ւ արվեստի գործ»: Իսկ դո՞ւք ինչպես եք բնորոշում ձեր լուսանկարները:**

-Իմաստ չեմ տեսնում նման որակումների մեջ: Ո՞րն է փաստաթուղթը, ո՞րն է արվեստը... Սուբյեկտիվ է: Հատկապես արվեստի դեպքում: Լուսանկարներն ինձ համար պարզապես լուսանկարներ են. ես դրանք ավելի շուտ ընկալում եմ որպես հաղորդագրություն, տեսողական տեքստ: Այդ տեքստը կարող է լինել թույլ, սխալ, քարոզչական, ճշմարիտ եւ այլն... եւ միշտ՝ սուբյեկտիվ: Այսինքն՝ ինձ համար թե՛ իմ, թե՛ ուրիշների լուսանկարները հաղորդակցության միջոց են: Նույնը կարելի է ասել նաեւ արվեստի մասին. մենք հաղորդակցվում ենք՝ օգտագործելով այդ գործիքները: Վերջիվերջո, կարծում եմ՝ հարցը պետք է դրվի այլ կերպ. հեղինակի արածը փոխանցո՞ւմ է ինչ-որ էական հաղորդագրություն:



**-Դուք կարծես նախընտրում եք սեւ-սպիտակ լուսանկարը: Ամերիկացի երաժիշտ Ջեք Անտոնոֆն ասել է. «Սեւն ու սպիտակը ստեղծում են մի արտասովոր երազային աշխարհ, որը գույնը երբեք չի կարող ստեղծել»: Համաձա՞յն եք:**

-Կասեի՝ ոչ: Ավելի հաճախ սեւ-սպիտակը սիրում եմ այն պատճառով, որ քաղաքները սովորաբար հարուստ չեն վառ գույներով կամ ստեղծում են պաստելային մի խառնուրդ, որն այնքան էլ արտահայտիչ չէ եւ միահյուսվում է իրար: Բացի այդ, գույների այդ համադրությունը հաճախ ոչինչ չի հաղորդում: Սեւ-սպիտակն այդ իմաստով «կտրում է» ավելորդը: Թեեւ երբեմն հաջողվել է գունավոր կադրեր անել՝ մեղմ գույներով, որոնք տեղին են եղել, բայց դա հաճախ չի պատահում: Իմ գունավոր լուսանկարների մեծ մասը ոչ թե գույները, այլ մթնոլորտը փոխանցելու համար են:

**-Ես նույնպես սիրում եմ սեւ-սպիտակ լուսանկարներ: Բայց տպավորություն է, թե դուք Հայաստանը հիմնականում տեսնում եք առանց գույների, այո՞ :**

-Եթե խոսքը քաղաքի մասին է, ապա՝ այո: Եթե գույնը հորինվածքի առումով չի համադրվում եւ ոչինչ չի «հաղորդում», ավելի լավ է հրաժարվել նրանից: Սակայն սեւ-սպիտակն ինձ համար բնավ մռայլ կամ ընկճված երանգներ չեն. այն շատ բնական, իրատեսական գամմա է:

**-Հավանաբար, ինչպես շատ ռուս տարագիրներ, դուք արդեն մի քանի անգամ պատմել եք, թե ինչպես հայտնվեցիք Հայաստանում: Բայց, խնդրեմ, պատմե՛ք եւս մեկ անգամ մեր ընթերցողներին:**

-Ես Երեւան հասա 2022 թվականի մարտի 5-ին՝ հենց որ կարողացա գտնել մատչելի ավիատոմս: Տագնապի եւ շոկի մեջ էի: Առհասարակ խնայողություններ չունեի, գնալու վայրի ընտրությունն էլ մեծ չէր, եւ մտածեցի, որ Հայաստանը շատ լավ տարբերակ է: Խոսքը ոչ թե գեղեցիկ կերպով տեղափոխվելու, այլ բառացիորեն փրկվելու մասին էր: Բայց այնպես եղավ, որ այստեղ ինձ ավելի քան լավ եմ զգում եւ հասկանում եմ, որ բախտս բերել է:





*Ալեքսանդր Գրեբեշկովի լուսանկարներից*

**-Լուսանկարչի ձեր հայացքը նկատե՞լ է Հայաստանում այնպիսի բան, որը, ձեր կարծիքով, շատերի աչքին աննկատ է մնում:**

-Ես դեռ լիովին ծանոթ չեմ տեղացի վավերագրողների աշխատանքներին, թեեւ կան այնպիսիներ, որոնց շատ եմ գնահատում: Բայց եթե կարճ ասեմ, կարծում եմ, շրջանցվում են այն թեմաները, որոնք հակասում են ավանդական պահպանողական արժեքներին՝ ԼԳԲՏ, մարմնավաճառություն, կանանց նկատմամբ բռնություն: Պետք է խոստովանել, որ այս թեմաները լուսանկարելը բարդ է որեւէ երկրում: Նույնպես բարդ է աշխատել սոցիալական թեմաներով՝ աղքատություն, հաշմանդամություն... Նման նկարահանում կազմակերպելը եւ համաձայնեցնելը շատ ավելի դժվար է, բացի այդ՝ դժվար իրավիճակում գտնվող մարդիկ հաճախ չեն ցանկանում համագործակցել:

**-Շատ ռուս տարագիրներ արդեն վերադարձել են հայրենիք կամ մեկնել են այլ երկրներ: Անձամբ ես որոշ չափով ափսոսում եմ դրա համար, քանի որ ձեր ներկայությունը Երեւանին մի յուրահատուկ գույն է հաղորդում: Բայց նաեւ հասկանում եմ նրանց՝ կյանքն այստեղ թանկացել է, իսկ օտար երկրում ապրելը միշտ էլ դժվար է: Ինչպե՞ս է այսօր ռուս արվեստագետի կյանքը Երեւանում:**

-Ես արհեստավոր եմ, ինձ համար ավելի հեշտ է: Կարող եմ վաստակել կոմերցիոն ռեպորտաժներով կամ բեմադրված նկարահանումներով: Իմ ստեղծագործական լուսանկարներով Ռուսաստանում անգամ մեկ կոպեկ չէի վաստակել: Սա՝ ֆինանսական առումով: Իսկ մնացյալ առումներով. եթե մարդը հաղորդակցվող է, նա միշտ կգտնի ընկերություն, աջակցություն, զրուցակիցներ՝ թե՛ ռուսների, թե՛ հայերի եւ այլոց մեջ: Լավ մարդիկ այստեղ շատ կան:

**-Եթե հնարավորություն ունենայիք անել Հայաստանի ընդամենը մեկ լուսանկար, որը պիտի պահպանվեր ապագա սերունդների համար, ի՞նչ կընտրեիք լուսանկարել:**

-Մեկ լուսանկարն ինքնին եզակի է: Կան խորհրդանշական լուսանկարներ՝ մեծ իրադարձությունների, պատերազմների, աղետների մասին: Բայց հետո պարզվում է, որ դրանց մի մասը բեմադրված է, ինչի մասին իմանում ենք տարիներ անց: Իսկ մեկ լուսանկար առօրյայից... հնարավո՞ր է դա, երբ մեր առօրյան հիմնականում բաղկացած է ամենօրյա առօրեականությունից: Կարծում եմ՝ մեկ լուսանկարի փոխարեն պետք է լինի մի ամբողջ լուսանկարչական շարք...

# «Անհայտ դեմքերի» հերթական փառատոնը՝ «Վերադարձ Հայաստան»

Ֆրանսիական medialot.fr կայքէջը տեղեկացրել է, որ նոյեմբերի 8-ից 16-ը ֆրանսիական «Անհայտ դեմքեր» միությունն իր հերթական փառատոնը Ֆրանսիայի հարավի Լալբենք եւ Լիմոնժ քաղաքներում նվիրել է Հայաստանին՝ «Վերադարձ Հայաստան» խորագրով: Ծրագիրը ներառել է ցուցահանդեսներ, կինոցուցադրություններ, պատմական եւ մշակութային քննարկումներ, թատերական ներկայացումներ ու համերգներ՝ միավորելով հիշողությունը, ճանաչողությունը եւ արվեստը:

Փառատոնի բացումը տեղի է ունեցել նոյեմբերի 8-ին, Լալբենքի քաղաքապետարանում՝ Մուսա Լեռան թեմայով ցուցահանդեսով եւ լուսանկարիչ **Քրիստիան Լատրեյի** «Հայկական քրոնիկա» լուսանկարների ցուցադրությամբ:

Նոյեմբերի 9-ին ցուցադրվել է **Նորա Մարտիրոսյանի** «Երբ որ քամին հանդարտվի» ֆիլմը (2020, Հայաստան-Ֆրանսիա):

1915 թվականին Մուսա Լեռան հայերի տարհանությունը կենտրոնական թեման էր Լալբենքի սրահում բացված ցուցահանդեսի և պատմական երեկոյի, որը վարել են **Դանիել Արաբյանը** եւ **Ժան Կորդելը** նոյեմբերի 10-ին: Հայտնի է, որ 1915 թ. սեպտեմբերին ֆրանսիացի ծովակալ **Լուի Դարտիժ դյու Ֆուրնեն** փրկել է Մուսա Լեռան բարձունքներում պատսպարված 4092 հայերի: Ծովակալն առանց վերադասների հրահանգի որոշել է ընդունել փախստականներին իր հրամանատարության ներքո գտնվող հինգ նավերի վրա, որոնցով նրանց անվնաս տեղափոխել է Պորտ Սաիդ (Եգիպտոս): Ցուցահանդեսում ներկայացվել են բնօրինակ փաստաթղթեր եւ լուսանկարներ, որոնք հավաքել է Ժան Կորդելը՝ թոռը ծովակալ **Ժան Լը Մեի**: Վերջինս, լինելով ֆրանսիական նավատորմի լեյտենանտ, ականատես է եղել այս փրկարար գործողությանը 1915-ի սեպտեմբերի 12-13-ին Սիրիայի ափերին:

Այս բացումը ոչ միայն հարգանքի տուրք է պատմական մի բացառիկ փրկարարական գործողության հանդեպ, այլեւ հիշեցնում Ֆրանսիայի եւ Հայաստանի միջեւ եղբայրական կապերի պատմական խորության մասին:

Նոյեմբերի 12-ին համայնքային դահլիճում ցուցադրվել է **Սերժ Ավետիքյանի** «Վերադառնալ Սոլոզ» վավերագրական ֆիլմը, որը խորհում է հիշողության, հաշտեցման եւ ինքնության թեմաների շուրջ: Նոյեմբերի 14-ին, պատմաբան **Ռեյմոն Գեւորգյանը** կարդացել է դասախոսություն՝ «Համեմատական մոտեցումը ցեղասպանությունների քննության մեջ. հայերից մինչեւ հրեաներ եւ թութսիներ»: Իսկ նոյեմբերի 15-ին Լիմոնժում ներկայացվել է «Որովհետեւ նրանք հայ են» երաժշտախաղը՝ ըստ թուրք սոցիոլոգ եւ գրող **Փընար Սելեքի** գրքի: Հեղինակը, որն այժմ ապաստանել է Ֆրանսիայում, ներկա է եղել՝ հանդիսատեսի հետ զրույցի համար:




Այսպիսով, «Վերադարձ Հայաստան» փառատոնը մի ամբողջ շաբաթ Ֆրանսիայի հարավում դարձել է հայ մշակույթի, պատմական հիշողության եւ մարդկային երկխոսության եզակի մի տոն:

Ա. Բ.

# Արշիլ Գորկուն նվիրված աննախադեպ ցուցահանդես Ամերիկայի հայկական թանգարանում

**Արշիլ Գորկուն նվիրված աննախադեպ ցուցահանդես Ամերիկայի հայկական թանգարանում**

Ուոթերթաունից Ամերիկայի հայկական թանգարանը տեղեկացնում է, որ առաջիկա դեկտեմբերի 11-ին կայանալու է բացումը «Արշիլ Գորկի: Վերակազմավորելով համայնքն ու հարաբերությունները» խորագրի ներքո աննախադեպ ցուցահանդեսի, որը եզրափակիչ միջոցառումն է լինելու անվանի նկարչի Ուոթերթաունում ապրած ժամանակահատվածի 100-ամյակին նվիրված հիշատակությունների շարքի: Ցուցահանդեսի կուրատորն է «JHM Charitable Foundation» բարեգործական հիմնադրամի հովանավորությամբ՝ «Penn» պետհամալսարանի հրատարակչատան կողմից լույս ընծայված «Rethinking Arshile Gorky» գիրք-ալբոմի հեղինակ **Կիմ Ս. Թերիոն** (Kim S. Theriault):



Ներկայացված են լինելու 1927-ից 1945 թվականներին ստեղծված 25 աշխատանքներ, որոնք ձեռք են բերվել անձնական հավաքածուներից, Ամերիկայի տարբեր թանգարաններից՝ ինչպես օրինակ Ամերիկյան արվեստի Ուիթնի թանգարանը, Արվեստի Հաուսատոնիկ թանգարանը, Յեյլ համալսարանի պատկերասրահը եւ Հայոց եկեղեցու արեւելյան թեմի Առաջնորդարանից: Կտավների մեծ մասը առաջին անգամ են ներկայացվում հանրության ուշադրությանը: Դրանք խորհրդանշում են Գորկի արվեստագետի ձեւավորման գլխավոր փուլերը, սկսած Մայր երկրից պատանի հասակում բռնագաղթվելուց մինչեւ անծանոթ Ամերիկայում ոտք դնելու եւ որպես նկարիչ կայանալու ու արվեստի նոր ուղղություններ սկզբնավորողի համբավ ձեռք բերելը:



«Նրա անցած ճանապարհը անձնական վիշտն ու կորուստը հաղթահարելու, նոր հարաբերություններ հաստատելու, ինչպես նաեւ ճկունություն, անընկճվածություն ցուցաբերելու եւ նորանոր հորիզոններ բացահայտելու վառ օրինակներ են», նշել է Կիմ Թերիոն, ավելացնելով, որ «Ցուցահանդեսը մեծ բավականություն է պատճառելու, քանի որ Գորկու տեսլականը այսօր էլ շարունակվում է»:

Ցուցահանդեսի ամենաուշագրավ կտավն է լինելու, անշուշտ, հետազոտողների կողմից բարձր գնահատված «Նկարիչն ու իր մայրը» մեծադիր ստեղծագործությունը, որտեղ Գորկին սովորական լուսանկարը դարձրել է, ըստ նրա սանուհի **Էթել Շվաբախերի**՝ «ներքին զգացումի ճշմարիտ հայելու»: Բոստոնցիները այն առաջին անգամն են տեսնելու:

Ոստանիկ Ադոյանը Ուոթերթաուն է ժամանել 1920-ի փետրվարին, ապրել այնտեղ իր քույրերի հետ մինչեւ 1924-1925-ը, որից հետո տեղափոխվել է Նյու Յորք: Ուոթերթաունը շատ երկար ժամանակ է ծառայել որպես ապաստան հայ գաղթականների համար: Գորկու կեցության 100-ամյակի կոմիտեն (**Ջեկ Դարգոնի** եւ ծրագրավորող **Լիզ Հելֆերի** ղեկավարությամբ) հիշատակի միջոցառումները կազմակերպել են՝ համագործակցելով Ամերիկայի հայկական թանգարանի, Արվեստների Մովսեսյան կենտրոնի, Ուոթերթաունի պատմական ընկերակցության հետ եւ Արշիլ Գորկի հիմնադրամի (տնօրեն **Պարկեր Ֆիլդ**), Ուոթերթաունի եւ Մասաչուսեթսի մշակութային խորհուրդների, Մասաչուսեթսի բնության պահպանության եւ հանգստի բաժնի, Ուոթերթաունի համայնքային հիմնադրամի եւ հանրային արվեստների ու Մշակույթի հանձնախմբի աջակցությամբ:

«Գորկին ամերիկյան, ինչպես եւ միջազգային արվեստի վառ ներկայացուցիչ է», գրել է **Շահեն Խաչատրյանը** իր կազմած «Ճանաչիր եւ սիրիր» մատենաշարի N4 գիրք-ալբոմում եւ եզրափակել. «Նա ինքնուրույն վերելք է ապրել՝ հենվելով արդիական արվեստի ընթացքը պայմանավորած ուղղություններին: Գաղտնիք չէ, սակայն, որ աշխարհի կողմից ճանաչված յուրաքանչյուր արվեստագետի օրրանը իր հայրենիքն է: Իբրեւ հայրենաբաղձ զավակ՝ Գորկու արվեստում արտացոլվել են մայր երկրի անմոռաց հիշատակներն ու այրող կարոտի ներշնչած խոսուն զգացումներն ու պայծառ գույները:

Արվեստի տարբեր երկրների մեծությունների պես Ադոյան Գորկին միշտ սնվել է հարազատ, հայկական արմատներից, եւ հոգեւոր բավականություն է, որ ինչպես բոլոր մեծերը, նա պատկանում է ամենքին...»:

«Արմինյն Միրոր Սփեքթեյթր»ից
Նյութը պատրաստեց
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ



# «Բաց գիրք» միջազգային գրական մրցանակը՝ ԲԱԲԿԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Բոսնիա-Հերցեգովինայի Դաշնության Սերբական Հանրապետության մայրաքաղաք Բանյա Լուկայում օրերս անցկացված պոեզիայի միջազգային 10-րդ փառատոնի «Բաց գիրք» հեղինակավոր մրցանակը շնորհվել է մեր հայրենակից՝ բանաստեղծ, թարգմանիչ, մշակույթի գործիչ **Բաբկեն Սիմոնյանին**՝ նրա գրական-մշակութային եւ թարգմանական գործունեության 50-ամյակի առթիվ: Գրական այդ հեղինակավոր մրցանակը, որը ստեղծվել է շուրջ տասը տարի առաջ, ստացել են ռուս, ամերիկացի, իտալացի, բուլղար, հունգար, ռումինացի եւ չին գրողներ, որոնք իրենց ստեղծագործությունները թարգմանաբար ներկայացրել են սերբ ընթերցողին:

Բանյա Լուկայում անցկացվող պոեզիայի ամենամյա փառատոնն իր շուրջ է համախմբում օտարազգի եւ սերբ գրողների, որոնք կամուրջներ են կերտում ժողովուրդների ու նրանց ազգային գրական հանրույթների միջեւ:

«Բաց գիրք» միջազգային գրական մրցանակը Բաբկեն Սիմոնյանին է հանձնել Սերբական Հանրապետության գրողների միության նախագահ, ճանաչված բանաստեղծ, թարգմանիչ **Պրեդրագ Բյելոշեւիչը**: Սիմոնյանի գրական գործունեության ու վաստակի մասին ելույթ է ունեցել սերբ անվանի բանաստեղծ, դրամատուրգ, թարգմանիչ, սցենարիստ, մրցանակաբաշխության ժյուրիի նախագահ **Զորան Կոստիչը**: Խոսելով Սիմոնյանի՝ բանաստեղծության դասական դպրոցի ավանդույթներին հավատարիմ մնալու, տաղաչափական արվեստի նրբություններին քաջատեղյակության մասին, բարձր է գնահատել նրա վաստակը ե՛ւ որպես բանաստեղծ, ե՛ւ որպես թարգմանիչ:

Մրցանակի հանձնման հանդիսավոր արարողությունը վարողը սերբերեն թարգմանաբար ներկայացրել է Բաբկեն Սիմոնյանի բանաստեղծություններից: Հեղինակն իր հերթին մի քանի բանաստեղծություն է կարդացել հայերենով՝ ցանկանալով, որ ներկաներն ըմբոշխնեն հայոց բառուբանի հմայքը:

Մրցանակը ստանալուց հետո Բաբկեն Սիմոնյանն իր շնորհակալական խոսքն է ուղղել Սերբական Հանրապետության նախագահին եւ ժյուրիին, ապա ընթերցել իր բանաստեղծական ուղերձը փառատոնին մասնակից բանաստեղծներին՝ կոչ անելով գրավոր խոսքի միջոցով ընդդիմանալ պատերազմներին ու բռնություններին, պահպանել ազգային դիմագիծը, պատմական հիշողությունն ու արժանապատվությունը եւ կամուրջ դառնալ տարբեր ժողովուրդների գրական հանրույթների միջեւ:

Ահա մի հատված Բաբկեն Սիմոնյանի ուղերձից. «**Գրողը ոչ միայն իր ժողովրդի, այլեւ ժամանակի խոսնակն է: Նրան է տրված իր ուսերին կրելու աշխարհի հոգսը, ուղղամտորեն ու ճիշտ ներկայացնելու իրականությունը: Բոլոր ժամանակներում, երբ հայրենիքը վտանգված է եղել, մեր կողքին են եղել ազգընտիր գրողներն ու մտավորականները, որոնք իրենց խոսքով ու գրչով սատարել են ժողովրդին, հույս ու լավատեսություն սերմանել մատաղ սերնդի հոգում: Շատ հայ գրողներ իրենց հայրենասիրական տողերով բազում սերունդներ են կրթել ու դաստիարակել ազգային ոգով՝ Միքայել Նալբանդյան, Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Եղիշե Չարենց, Հովհաննես Շիրազ, Սիլվա Կապուտիկյան, Համո Սահյան: Ես քաջատեղյակ եմ նաեւ սերբական գրականությանը, պատմությանն ու տառապանքներին, որոնք ինձ հիշեցնում են հայ ժողովրդի արյունալի անցյալը եւ դառը ճակատագիրը: Գիտեմ, որ դարեր շարունակ սերբական հողը բզկտվել ու վերաձեւվել է, իսկ սերբերը կյանքի ու մահու կռիվ են տվել այլալեզու բարբարոսների դեմ՝ պաշտպանելու սրբություն-սրբոց հայրենիքը: Այդ ամենը հստակ արտացոլված է սերբ անվանի բանաստեղծներ Պետար Պետրովիչ Նեգոշի, Միլան Ռակիչի, Յովան Դուչիչի, Ալեքսա Շանտիչի, Պետար Կոչիչի, Դեսանկա Մաքսիմովիչի եւ այլոց հայրենասիրական տողերում... Ասել է, թե գրողներն աշխարհի ամենաանհանգիստ սիրտն են, նրանց է բաժին հասել մեր խոցված մոլորակի արնածոր սիրտն ամոքելու առաքելությունը: Նրանք իրենց ստեղծագործություններով նպաստում են խաղաղ ու բարեկեցիկ աշխարհ կերտելուն**»:

Բաբկեն Սիմոնյանի բանաստեղծական ուղերձը ջերմությամբ է ընդունվել փառատոնին մասնակից գրողների կողմից: Ուղերձի առանձին հատվածներ տեղ են գտել սերբական զանգվածային լրատվամիջոցներում:

# Դրվագներ ԱՄՆ-Հայաստան պաշտպանական հարաբերությունների հանդիպումներից

## *Ռազմավարական պարտավորություններից՝ դիվանագիտական լճացում*

**ՍՈՒՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**

*Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագետ*

Հայաստանի եւ Մ. Նահանգների միջեւ պաշտպանական ոլորտի հարաբերությունները զարգացել են վերջին երկու տասնամյակների ընթացքում արձանագրելով երբեմն առավել ակտիվ, երբեմն էլ առավել պասիվ պարտավորություններ: Մինչ 2000-ական թվականներին նկատվում էր հիմնականում բարձրաստիճան հանդիպումների եւ շոշափելի ռազմական համագործակցության ակտիվացում, վերջին շրջանում, հատկապես ներկայիս ՀՀ պաշտպանության նախարար **Սուրեն Պապիկյանի** պաշտոնավարության ներքո, դրանք նվազ արդյունավետ են դարձել՝ առաջացնելով հարցեր երկկողմ հարաբերությունների ուղղվածության եւ խորության վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը վերջերս երրորդ անգամ այցելեց Մ. Նահանգներ: Հոկտեմբերի 12-ի այցելությունը առաջինն էր Թրամփի վարչակազմի օրոք: Բարձրաստիճան հանդիպումներ չկայացան: Ոչ էլ տեսակցություն՝ մասնավորապես ԱՄՆ պատերազմի քարտուղար **Պիտ Հեգսեթի** հետ: Պապիկյանի միակ պաշտոնական հանդիպումը տեղի ունեցավ Պենտագոնում պատերազմի քաղաքականության փոխքարտուղար **Էլբրիջ Կոլբի** հետ: Կոնկրետ արդյունքներ չհրապարակվեցին: Հայ-ամերիկյան ռազմական համագործակցությունը սովորաբար ընթանում է գոյություն ունեցող ծրագրերի շրջանակներում: Այդ շրջագայության միակ արդյունքը Հայաստանի զինվորական համազգեստի փոփոխությունն էր: Պապիկյանը Վաշինգտոնում հանդիպել էր զինվորական համազգեստներ նախագծող եւ բարեփոխություններ իրականացնող «Միլլիքեն» ամերիկյան ընկերության ղեկավարության հետ:

Հայաստանի ներկա իշխանությունների համար Մ. Նահանգների Հանրապետական վարչակազմի հետ արդյունավետ հարաբերություններ հաստատելը կարծես մարտահրավեր լինի: Դրա հնարավոր բացառությունն այն է, որ 2024-ի դեկտեմբերի 5-ին, **Բայդենի** վարչակազմի վերջին օրերին Պապիկյանը հանդիպում ունեցավ ԱՄՆ պաշտպանության քարտուղար **Լոյդ Օստինի** հետ: Այդ հանդիպումը կայացավ Պենտագոնում բարի գալստյան պաշտոնական արարողությամբ, որից հետո Օստինն իր ելույթում շեշտեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի այցի պատմական նշանակությունը:

Չնայած Մ. Նահանգների Դեմոկրատական վարչակազմը 2018-ից ի վեր հավելյալ հետաքրքրություն էր ցուցաբերել Հայաստանի եւ ընդհանրապես տարածաշրջանի նկատմամբ, երկու պետությունների պաշտպանության գերատեսչությունների ղեկավարների միջեւ բարձրաստիճան հանդիպումներ չէին կայացել, եւ հանդիպումը նշանակալի էր, որովհետեւ տեղի էր ունենում Թրամփի իշխանության ղեկը ստանձնելուց մոտ 40 օր առաջ: Չկային Հայաստանի կողմից ԱՄՆ-ին ներկայացված համագործակցության որոշակի կարեւոր ծրագրեր: Օրակարգում ընդամենը Հայաստանին ամերիկյան օգնություն ցուցաբերելու հարցերն էին: Հանդիպումը պատմական էր այն իմաստով, որ լրացնում էր երկու տասնամյակ տեւած բարձրաստիճան հանդիպումների բացթողումը, սակայն կոնկրետ արդյունքների կամ առաջարկների չգոյությունը հարցեր էր առաջացնում դրա հետեւանքների եւ ընդհանրապես Հայաստանի շահերի նպատակահարմարության վերաբերյալ:

Մի քանի տարի առաջ, ավելի կոնկրետ՝ 2022-ի սեպտեմբերի 5-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը ԱՄՆ էր մեկնել հանդիպելու առաջին անգամ պաշտպանության քաղաքականության փոխքարտուղար **Կոլին Կահի** հետ: Այցելության նպատակը, կարծես, կրթական եւ վերլուծական ոլորտի համագործակցությունն էր, քանի որ երեք հանդիպում տեղի ունեցավ կրթական հաստատություններում, որոնց թվում էին Կանզասի վերապատրաստման կենտրոնը, Ազգային գվարդիան եւ Վաշինգտոնի համալսարանը:

Եթե առավել լայն իմաստով վերլուծենք ԱՄՆ-Հայաստան բարձրաստիճան պաշտպանական հարաբերությունների կոնտեքստը, կտեսնենք, որ Պապիկյանի այցելությունները նվազ արդյունավետ են եղել, քան իրեն նախորդած Հայաստանի մյուս պաշտպանության նախարարների այցելությունները: Ընդհանուր առմամբ, 1990-ականներն ու 2000-ականները ռազմական համագործակցության ամենաակտիվ ժամանակաշրջաններն են եղել: Մինչ դա, անկասկած ժամանակի պատմական, քաղաքական եւ անվտանգության դինամիկայի ներգործության արդյունք էր, դա նաեւ կրիտիկական պահ էր, հանուն մեր երկրի շահերի, կապիտալի վերածելու ընձեռված մարտավարական հնարավորությունները:

Ինչպես ստորեւ կշարադրենք, այդ տարիներին բազմաթիվ բարձրաստիճան հանդիպումներ են տեղի ունեցել Հայաստանի պաշտպանության նախարարների եւ Ամերիկայի պաշտպանության քարտուղարների միջեւ: Ավելին, այդ ժամանակ նույնիսկ համագործակցության նոր ոլորտներ են ստեղծվել, որոնցից շատերն այսօր էլ շարունակվում են գործել:

1994-ին նախագահ **Լեւոն Տեր-Պետրոսյանի** ԱՄՆ այցելության ժամանակ, իրեն ուղեկցող ՀՀ պաշտպանության նախարար **Վազգեն Սարգսյանը** բարձրաստիճան հանդիպում ունեցավ իր գործընկեր ԱՄՆ պաշտպանության քարտուղար **Ուիլյամ Պերրիի** հետ: Երկու կողմերը Պենտագոնում ստորագրեցին ռազմական համագործակցության հուշագիր, որն էապես կարեւոր էր ԱՄՆ-Հայաստան պաշտպանական հարաբերությունների համար: Հուշագիրը աննախադեպ էր, քանի որ նման փաստաթուղթ դեռեւս չէր ստորագրվել նախկին Խորհրդային Միության հանրապետություններից որեւէ մեկի հետ:

Սա հատկանշական է, քանի որ այդ ժամանակ Հայաստանը պատերազմի մեջ էր եւ ակնկալվում էր, որ նման համաձայնագիր էլ կկնքվի Ադրբեջանի հետ: Բայց այդպիսի բան տեղի չունեցավ:

Հետո, նախագահ **Քոչարյանի** վարչակազմի ներքո, 21-րդ դարի առաջին հանդիպումը կայացավ, եւ ՀՀ պաշտպանության նախարար **Սերժ Սարգսյանը** 2000 թվականի հուլիսի 24-ին Վաշինգտոնում հանդիպեց Մ. Նահանգների պաշտպանության քարտուղար **Ուիլյամ Քոհենի** հետ: Հանդիպման ընթացքում Սարգսյանն ու Քոհենը ստորագրեցին զանգվածային ոչնչացման զենքերի տարածումը կանխելու մի պայմանագիր, որով նախատեսվում էր նաեւ 300,000 դոլար հատկացնել Հայաստանին՝ սպառազինության եւ վերապատրաստման ծախսերի համար: Դա նշանակալի այցելություն էր եւ կարեւոր քայլ հետխորհրդային ժամանակահատվածում խորացնելու հարաբերությունները Հայաստանի եւ Մ. Նահանգների միջեւ:



Երկու տարի անց, 2002-ի մարտի 20-ին պաշտպանության նախարար Սարգսյանը երկրորդ անգամ մեկնեց Վաշինգտոն, եւ այս անգամ Պենտագոնում հանդիպեց ԱՄՆ պաշտպանության քարտուղար **Դոնալդ Ռամսֆելդի** հետ, որը մեկ տարի առաջ (2001-ին) Հայաստան էր այցելել: Այսպիսով, **Սարգսյանը** Ռամսֆելդի հետ իր երկրորդ հանդիպումը համարում էր «ԱՄՆ-Հայաստան ռազմավարական խորհրդակցությունների մեկնարկը»: Ռամսֆելդը Հայաստանին շնորհակալություն հայտնեց ահաբեկչության դեմ պայքարին աջակցելու համար:

Պաշտպանության քարտուղարի հետ հանդիպումից բացի, մի շարք այլ բարձրաստիճան հանդիպումներ եւս կազմակերպվեցին Սարգսյանի համար, ներառյալ ԱՄՆ պաշտպանության փոխքարտուղար **Պոլվուլֆովիցի** հետ: Բանակցությունները բավական արդյունավետ էին: 2002-ին հիմնվեց Հայաստանի պաշտպանության նախարարության ականազերծման մարդասիրական կենտրոնը, իսկ 2003-ին Կանզաս նահանգն ու Հայաստանը միացան իրար «Ազգային գվարդիայի բյուրոյի պետական գործընկերության ծրագրի» շրջանակներում, դյուրացնելով համագործակցությունը Կանզասի Ազգային գվարդիայի եւ Հայաստանի կառավարական մարմինների (պաշտպանության, առողջապահության նախարարությունների, փրկարար ծառայությունների, եւայլն) հետ:

Սարգսյանի Ամերիկա այցելությունից ընդամենը մեկ ամիս անց հայաստանյան պաշտոնյաների մեկ այլ այցելություն եւս կազմակերպվեց: 2004 թվի հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 5-ը ՀՀ ՊՆ առաջին տեղակալ եւ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ գեներալ-գնդապետ **Միքայել Հարությունյանը** (որ հետագայում՝ 2007-08 թթ. դարձավ պաշտպանության նախարար) Մ. Նահանգներում էր եւ հանդիպումներ էր ունեցել Վաշինգտոնում, այցելել էր Ֆլորիդայի կենտրոնական հրամանատարության եւ Կանզասի Ազգային գվարդիայի կառույցները: Կազմակերպվել էին նաեւ հանդիպումներ Ամերիկայի ռազմական ղեկավարության գրեթե բոլոր անդամների՝ ներառյալ շտաբի պետերի միացյալ կոմիտեի նախագահ գեներալ **Ռաբների** եւ այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Նման այցելությունները է՛լ ավելի ամրապնդեցին Հայաստանի ստանձնած պարտավորությունները սերտացնելու ռազմավարական կապերը Մ. Նահանգների հետ:

Ուղիղ մեկ տարի անց մեկ այլ այցելություն կազմակերպվեց: 2005-ի հոկտեմբերին Սարգսյանը առանձին հանդիպումներ ունեցավ ԱՄՆ-ի ազգային անվտանգության խորհրդատու **Սթիվն Հեդլիի** եւ պետքարտուղար Դոնալդ Ռամսֆելդի հետ: Ռամսֆելդը Հայ-ամերիկյան ռազմական հարաբերությունների զարգացման հեռանկարները գնահատեց «շատ լավ» եւ Սարգսյանի այցն էլ «դրական» որակեց: Նա նաեւ շեշտեց, որ բարձր է գնահատում հայ-ամերիկյան հարաբերությունները, ավելացնելով, որ «այցելության ժամանակ կայացած միջոցառումները փաստացի վկայությունն են այդ հարաբերությունների»: «Մենք իրավունք չունենք բաց թողնելու բանակը վերակազմավորելու այս լավ առիթը», եզրակացրեց նա:

Հաջորդ պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանը պաշտոնական այցելություններ չկատարեց, քանի որ ընդամենը մեկ տարի մնաց այդ պաշտոնում: Բայց նա այցելել էր ԱՄՆ որպես ՊՆ առաջին տեղակալ եւ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ, ինչպես նշվեց վերեւում:

Նրան հաջորդած **Սեյրան Օհանյանը** շարունակեց բարձրաստիճան հանդիպումների ավանդույթը Սարգսյանի իշխանության ներքո: 2012-ի մարտին ՀՀ ՊՆ Օհանյանը պաշտոնական այցով մեկնեց ԱՄՆ, որտեղ հանդիպեց իր գործընկերոջը՝ **Լեոն Պանետտային**: Վերջինս իր երախտագիտությունը հայտնեց այն բանի համար, որ Հայաստանն իր մասնակցությունն է բերում Կոսովոյում եւ Աֆղանստանում ՆԱՏՕ-ի տարած առաքելություններին: Օհանյանը նաեւ հանդիպեց ԿՀՎ-ի տնօրեն **Դեյվիդ Հ. Պետրեուսի**, պետքարտուղարի տեղակալներ **Ֆիլիպ Գորդոնի** եւ **Էնդրու Շապիրոյի** հետ: ՀՀ պաշտպանության նախարարը այդպիսով կարողացավ պահպանել ԱՄՆ-ի իր գործընկերների հետ հանդիպումների ավանդույթը:

Հակառակ, որ ռազմավարական գործընկերության փաստաթուղթ է ստորագրված, Հայաստանի եւ Մ. Նահանգների միջեւ պաշտպանության ոլորտում հարաբերությունները չեն խորանում: Ավելին, Թրամփի վարչակազմի ներկա ընթացքում Հայաստանին (ներառյալ անվտանգության ոլորտին) հատկացվող օգնությունը նվազել է: Բարձրաստիճան հանդիպումները նշանակում են, որ օրակարգում կարեւոր հարցեր կան քննարկելու: Հակառակ, որ տարածաշրջանում շուտով կմեկնարկի Թրամփի ուղի (TRIPP) կոչված ծրագիրը, ռազմական համագործակցությունը երկու պետությունների միջեւ առաջ չի գնում եւ նոր ծրագրեր չեն իրագործվում:

Անգլ. բնագրից թարգմանեց՝
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

# Ամեն մարդ՝ ի՛ր ձեւով

## *Մեկը կառուցելով, մյուսը՝ կալանավորելով*




«Տաշիր Արենա» նորաբաց կրկես այցելելու նախաձեռնությունը տասնամյա թոռանս՝ Ռուբենինն էր: Ընկերներից էր իմացել այդ մասին, ապա, ինչպես մեր մատաղ սերնդի երեխաներն են սովորաբար անում, համացանցից տեղեկություններ էր հավաքել դրա մասին եւ, բնականաբար, ինձ՝ պապիկի՛ն պիտի դիմեր իրեն այնտեղ տանելու համար:

Ու գնացինք: Օրը ուրբաթ էր, երեկոյան ժամը 7: Դահլիճը լիքը չէր, դատարկ աթոռներ կային, սակայն աուրան առկա էր՝ սպասումի անհամբերությամբ: Այդ նույն անհամբերությունը թոռանս հետ ինքս էլ զգացել էի կրկեսի բակում, Արշակունյաց-Գր. Լուսավորիչ փողոցների հատման կետում, բավական ընդարձակ բացօթյա հատվածում, որը, մեր ուսանողության տարիներին կոչվում էր «Ցիրկի մոտ», որտեղ ամառ շոգ գիշերներին գնում էինք «պիվա» խմելու եւ տաք «պերաշկի» ուտելու: Գարեջուրը խմում էինք մեծ գավաթներով, իսկ նույն ձիթայուղի մեջ ամբողջ օրը տապակվող «պերաշկիների» զզվելի հոտը տարիներ անց դեռ զգում էին մեր նախկին կրկես հաճախող երեխաները, ինչպես իմ մյուս թոռները, որոնք այսօր դեռ հիշում են այդ... հոտը:

Հոտը հիմա չկա: Փոխարենը կա գերժամանակակից ճարտարապետության արտահայտություն հանդիսացող սեւաթույր-կապույտ պսակաձեւ՝ գերարդիական, այլմոլորակային կոչմանը արժանի մի նոր կառույց, որը, միշտ հարազատ ու համահունչ է, նկատել եմ, երեխաների տեսլականին:

Գեղեցիկ, շատ հարմարավետ, ընդարձակ դահլիճ մտանք՝ երեխաների ճռվողյունների ուղեկցությամբ, ուր մեզ դիմավորեցին սեւ կոստյումներով սլացիկ աղջիկներ՝ բարեհամբույր եւ հյուրընկալ: Նախկին քաշքշուկն ու կոպտությունները «պերաշկու» հոտի հետ՝ ցնդել են: Իսկ օդում, արդեն դահլիճում, առաստաղի օղակաձեւ գոտում անընդհատ փոխվում էին բնության տեսարանները՝ համապատասխան երաժշտությամբ:

Հնչեց զանգը, բեմ դուրս եկավ կրկեսի, բոլո՛ր կրկեսների տիրակալը՝ ծաղրածուն՝ ավանդական ծամածուռ գլխարկով, ոլորուն քթով ու կոշիկներով, վերջապես՝ արտառոց արտաքինով, որպեսզի պատմի, թե ինչի մասին է ներկայացվելիքը: Ծաղրածուն, չգիտեմ՝ ինչ ազգության էր. միաժամանակ խոսում էր տարբեր լեզուներով, իտալերենից մինչեւ ֆրանսերեն, երբեմն՝ ռուսերեն, մի քանի բառ էլ՝ հայերեն, վերջապես՝ ծաղրածուերեն, այսինքն՝ ժեստերի լեզվով: Եվ խոսելով էլ բարձրացավ կենտրոնից վեր սլացող բարակ սյան վրա, ավելի ճիշտ՝ փորձեց բարձրանալ, նորից ու նորից ընկավ ցած, նորից ու նորից փորձեց բարձրանալ, մինչեւ որ, հանկարծ, իր փոխարեն «երկինք» թռան trapezist-ները, ակրոբատները: «Երկնքում» ստեղծվեց «վերերկրայինների» ողջագուրման, հեռվից աներեւակայելի արագությամբ միմյանց ձեռքերից կառչելու, մի ձեռքից մյուսը թռչելու, ընթացքում՝ օդում մի քանի պտույտ եւս տալով պարզված ձեռքերից կառչելու եթերային մի սիմֆոնիա, որը, աչքի պոչով նայելով թոռանս՝ զգացի, որ նրա սրտով էր, նա սպասում էր դրան, որպես տիեզերական շարժումների վերաբերյալ համացանցային կշռույթին եւ անակնկալներին սովոր նոր սերնդի մի մասնիկ:




Վերադառնալով կոնկրետ, մոդայիկ բառով՝ հողի վրա կատարվածին, կրկեսի օդում եւ հատակում, նույնիսկ՝ անակնկալորեն բացված փոսում, ակրոբատների հրաշալի, կրկեսներում ընդունված՝ վտանգավոր ցատկերով ու թռիչքներով ստեղծում էին եթերային այն աշխարհը, տիեզերքը, որին համահունչ երկրագունդը հավիտենական է շարժման մեջ, որը խորհրդանշող լուսե գնդակներով նույն ակրոբատներն իջան դահլիճ եւ շարք առ շարք անցնելով մատչելի դարձրեցին հավիտենական շարժումը:

Այդ ամբողջ ընթացքում անընդհատ հնչում էր ազդեցիկ երաժշտությունը ձայնագրված, որը մերթ ընդ մերթ ընդմիջվում էր ցուցադրության ընթացքում անակնկալ բացվող բեմից մի երգչուհու կատարումով, սլավոնական հնչյուններով եւ անհասկանալի բառերով, որը անհասկանալի մնաց ինձ եւ, դատելով դեմքից՝ նաեւ թոռանս համար: Ընդհակառակը, ակրոբատների գործողությունների որոշ դրվագների ընթացքում հնչեց, շա՜տ գեղեցիկ գործիքավորումով, հայկական «քոչարիի» ռիթմը՝ զուռնայի զիլ հնչյունների տակ: Դա ինչ-որ չափով հիշեցրեց, որ ներկայացումը Հայաստանում է եւ հայ հանդիսատեսի համար:

Արդարեւ, Հայաստանի, նրա մայրաքաղաքի համար կարեւոր, շատ կարեւոր կառույց է ստեղծվել, ոչ միայն մեր նորահաս սերունդների, այլեւ տարածաշրջանային մյուս երկրների մեծ ու փոքր հանդիսատեսների համար, իսկ իր սարքավորումների, տեխնիկական, ձայնային, լուսային եւ ընդհանրապես նշանային իմաստով աշխարհի, այո՛, վստահորեն եմ ասում,- նորագույն կառույցի իմաստով,- մեր հպարտությունն է լինելու, ուր, վստահաբար, միջազգային համբավի կրկեսային խմբեր պիտի ուզենային գալ ու հայ եւ օտար հանդիսատեսին ներկայացնել այն հրաշալի աշխարհը, որը երեխաների, եւ ոչ միայն, հեքիաթային մտապատկերումների դաշտն է, հավիտենության ձգտող մթնոլորտը:

Շուրջ 3 ժամ տեւող ներկայացումից իմ թոռը չձանձրացավ, ինչպես ես: Նրա մոտ մնաց հրաշալի ներկայացմանը մասնակից ռոբոտ շունիկը, որը երբեմն չէր ենթարկվում, երբեմն էլ հաճույքով կատարում էր Ծաղրածուի հրահանգները, իսկ ինձ մոտ՝ հիացումը այն մարդկանց նկատմամբ, գլխավորությամբ Նիկոլի նկուղներում տառապող բարեգործին՝ **Սամվել Կարապետյանին**, որին չթույլատրեցին ներկա գտնվել իր տեսլականի բացման հանդիսությանը ճղճիմ արարածների որոշմամբ, Հայ եկեղեցուն, հայ մշակույթին, հայոց մայրաքաղաքին ծառայելու, պաշտպանելու, ի՛ր եւ միայն ի՛ր ձեւով հայրենիք, ազգություն, ապագա սերունդներին իսկական հայրենասիրություն ջամբելու եւ պաշտպանելու գործը, մնայուն գործերով երկիր կառուցելու գործը:



Իմ համոզմամբ, նա ճարտարապետներին, շինարարներին, դիզայներներին եւ մյուս մասնագետներին պատվիրել էր ոչինչ չխնայել իր տեսակի մեջ աշխարհի լավագույն կառույցներից մեկը ստեղծելու համար, ի՛ր ձեւով ստեղծելու համար:

Վստահ եմ, մոտիկ ապագայում, ոգեւորվելով այս նորակառույցի առկայությունից, կրկեսային լավագույն խմբեր կունենանք նաեւ մենք, որոնք կհամալրեն, նոր բարձունքների կհասցնեն **Լեոնիդ Ենգիբարյանի** եւ մյուս երախտավորների տարիներ առաջ ստեղծած ավանդույթները, նոր ձեւով, իրենց ձեւով:

❖❖❖

Ի դեպ, մամուլում եւ տեղեկատվական այլ միջոցներում ես չհանդիպեցի որեւէ հիշատակության, թե Երեւանի քաղաքապետը մասնակցել է Երեւանի նոր կրկեսի՝ Tashir Arena-ի բացման հանդիսությանը: Վախեցե՞լ է պաշտոնազրկումից, թե՞ չի կարեւորել այդ իրադարձությունը: Երեւի՝ նա էլ ի՛ր ձեւով է ենթարկվել մնայուն արժեք ստեղծողներից խուսափելու պարտադրանքին, հաստատ իմանալով հանդերձ, որ Երեւանի պատմագիրներն էլ իրե՛նց ձեւով են արձանագրելու այդ բացակայությունը:

Անկարեւոր մարդիկ միշտ էլ մնալու են անկարեւոր, առանց բացատրությունների: Կարեւորը՝ Երեւանն այժմ նոր, արդիական կրկես ունի: Նոր սերունդները հաճախելու են այնտեղ, տեսնելու են, ոգեւորվելու են իրենց երեւակայության անսահմանությամբ: Հիշելու են այն ստեղծողին, մոռանալու են մնացյալներին:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Հայագետ Յասմին Դում Թրագութին շնորհվել է պրոֆեսորի մասնագիտական կոչում

⇨1 Նա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության հարցերով գրասենյակի գիտական խորհրդատուն է: 2020-ից սկսյալ բազմաթիվ են Յասմին Դում Թրագութի՝ Լեռնային Ղարաբաղում քրիստոնեական ժառանգության պահպանմանը նվիրված հրապարակումները միջազգային գիտա եւ մեդիահարթակներում:

«Զալցբուրգում հայագիտական ուսումնասիրություններն հաստատելու տարիների իմ ջանքերն այժմ ճանաչում և գնահատում են նաև Ավստրիայի իշխանությունները՝ ինձ պրոֆեսորի կոչում շնորհելով», իր երախտագիտությունն է հայտնել ավստրիացի հայագետ Դում Թրագութը: «Վերջին տարիներին Դում-Թրագութի նվիրվածությունը հայկական մշակույթին զգալիորեն նպաստել է ակադեմիական նոր առարկաների զարգացմանը, այդ թվում՝ Հայաստանում: 2023 թվականի հոկտեմբերից նա ղեկավարում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի հայկական մշակութային ժառանգության ուսումնասիրությունների միջառարկայական հետազոտական նոր բաժինը», գրում է kathpress-ը:

2023 թվականի դեկտեմբերին Հայաստանի նախագահը Դում Թրագութին արժանացրել է ՀՀ պետական բարձրագույն պարգեւի՝ Մովսես Խորենացի շքանշանի: «Ազգում» գրել ենք, որ Յասմին Դում Թրագութին հոկտեմբերի 8-ին շնորհվել է ՀԲԸ Միության «Կարպիս Փափազյան» մրցանակ՝ «լայնածավալ հայանպաստ գործունեության, հետազոտությունների, կոնֆերանսների կազմակերպման, հայոց լեզվի, մշակույթի, պատմության, եկեղեցու եւ հայկական մշակութային ժառանգության վերաբերյալ բազմաթիվ հոդվածների եւ գրքերի համար» (տե՛ս «**Ազգ**», 03.10.2025):

Հոկտեմբերի 24-ին Մատենադարանում բացվեց Դում Թրագութի «Սրբագործ ձեռքեր. Գրչակենտրոն կուսանոցներ Հայաստանի հարավում, 17-րդ դար» անվանյալ ցուցահանդեսը: Իսկ առաջիկայում Դում Թրագութի ջանքերով Լեոգանգի գոթական թանգարանում կբացվի «Հայաստան» ցուցահանդեսը, որ այցելուներին կներկայացնի հայոց քրիստոնեական ժառանգության նմուշներ:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# Մոնթրէալի մէջ նշուեցաւ «Ապագայ» շաբաթաթերթի 50-ամեայ յոբելեանը



Ամիսներէ ի վեր ծանուցուած՝ Գանատահայ առաջին թերթ, եռալեզու «Ապագայ»ի 50-րդ Ոսկեայ տարեդարձը նշուեցաւ աննախընթաց խանդավառ մթնոլորտի մը մէջ Նոյեմբեր 1-ին, Centre Arménie կեդրոնի շքեղ սրահին մէջ, մասնակցութեամբ աւելի քան 300 ներկաներու:

Մեր գաղութի ամենանշանակալից յոբելենական անկիւնադարձային առիթներէն մէկն էր այս տօնակատարութիւնը, որ տեղի կունենար օրհնութեամբը Գանատահայ թեմի հոգեւոր առաջնորդ՝ Տէր Աբգար Եպս. Յովակիմեանի եւ հովանաւորութեամբը Գանատայի մօտ Հ.Հ. դեսպան Տիկ. Անահիտ Հարութիւնեանի: Այս առիթն էր նաեւ «Ապագայ»ի տարեկան նուիրահաւաքին որուն այս տարի մասնակցած էին աննախընթաց թիւով «Ապագայ»-ի եւ Մոնթրէալի Թէքէեան Մշակութային Միութեան երկար տարիներէ ի վեր նիւթապէս իրենց զօրակցութիւնը յայտնած ազնիւ ազգայիններ: Այս երեկոյթին աւանդութիւն դարձած երաժշտական երկրորդ բաժնին համար այս տարի հրաւիրուած էր հայկական նորագոյն երգերու մեկնաբանող Սոֆի Մխեյանը:



Երեկոյթի սկզբնաւորութեան տեղի ունեցաւ «Ապագայ»ի 50 տարիներու ընթացքին Գանատահայ գաղութին նկատմամբ ունեցած դերին պատմական նշանակութիւնը արտացոլող տպաւորիչ բաժին մը: Օրուան հանդիսավար Տիկ. Սալբի Հալաճեան-Մարկոսեանը բացման խօսքերէն ետք հրաւիրեց «Ապագայ»ի խմբագիր պրն. Աւետիս Պագգալեանը որ տպաւորիչ կերպով ներկայացուց նախ ընդհանրապէս հայ մամուլի դերը եւ «Ապագայ»ի կարեւոր դերը մեր գաղութին եւ հայ իրականութեան համար: Ապա՝ հանդիսավար Տիկ. Մարկոսեան հրաւիրեց Թէքէեան Մշակ. Միութեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Կեդր. Վարչութեան ատենապետ եւ «Ապագայ»ի գլխաւոր հիմնադիրներէն մէկը հանդիսացող **Դոկտ. Արշաւիր Կէօնճեանը՝** փոխանցելու համար իր սրտի խօսքը: Դոկտ. Կէօնճեան հանգամանօրէն եւ կուռ ելոյթի մը ընթացքին նախ գնահատանքով մատնանշեց մեծ վաստակը 50 տարիներու ընթացքին «Ապագայ»ին ծառայած նուիրեալներու խումբին, որոնցմէ այժմ, աւա՜ղ, մեծ թիւ մը յաւէտ բաժնուած են մեզմէ: Յետոյ ստորագծեց, թէ «Ապագայ»ի հիմնադրութիւնը 50 տարիներ առաջ պատահականութեան հետեւանք չէր երբեք, այլ արդիւնքն էր ծրագրուած եւ հետեւողական աշխատանքի մը, որուն նպատակը նորաստեղծ գանատահայութեան ուժեղ ազգային նկարագիր տալն էր եւ կապ հաստատել նոր այս գաղութին ու հայրենիքին եւ ամբողջ հայ աշխարհին հետ: 50 տարիները որոնց վաստակը կը նշենք այսօր, ան ըսաւ թէ իսկական անվերջանալի ճակատամարտ մըն է, որ ոչ սկիզբ ունի եւ ոչ ալ վերջ:

Այստեղ Դոկտ. Կէօնճեան ճակատամարտի իր ակնարկութեան անդրադառնալով և յատուկ յուզումով, միտքի ոստում մը կատարելով պատեհ նկատեց հանդիսականներուն ներկայացնել այս երեկոյթին Հայաստանէն հիւրաբար ներկայ գտնուող Ազգային հերոս, փոխգնդապետ Սարգիս Ստեփանեանը: Ան ըսաւ, թէ գնդապետ Սարգիս Ստեփանեանը Ղարաբաղեան վերջին հերոսական ճակատամարտերուն կորսնցուցած է իր մարմնի չորս անդամներէն երեքը: Յոտնկայս ծափահարութիւններով բոլոր ներկաները իրենց յարգանքը յայտնեցին հայրենի հերոսին:

Դոկտ. Կէօնճեանի ելոյթէն ետք դեսպան Անահիտ Հարութիւնեան իր գնահատանքը յայտնեց «Ապագայ»-ի 50 տարիներու հետեւողական լայնամիտ եւ հայրենամէտ՝ ազնիւ լրագրական վաստակին համար, ինչպէս նաեւ բոլոր անոնց, որոնք դժուարին այս աշխատանքը կը կատարեն երկար տարիներէ ի վեր մասնաւոր կերպով գնահատելով աշխատանքը ներկայ խմբագիր պրն. Աւետիս Պագգալեանին, «Ապագայ»ի առաջին խմբագիր պրն. Արսէն Նուպար Մամուրեանին եւ մասնաւորապէս գաղութի հիմնական ենթակառոյցներու ստեղծման մէջ որոշիչ իր դերը կատարած Դոկտ. Արշաւիր Կէօնճեանին: Ապա, հանդիսավար Տիկ. Մարկոսեան հրաւիրեց Առաջնորդ Սրբազան Հայրը, որ իր կարգին բարձր գնահատանքով վեր առաւ «Ապագայ» շաբաթաթերթի կատարած կարեւոր առաքելութիւնը գանատահայ մեր գաղութին մէջ 50 տարիներէ ի վեր եւ մանաւանդ այն դժուար շրջաններուն, ուր մեր եկեղեցին ու հայրենիքը կ անցնին տագնապալից ժամանակներէ: Առաջնորդ Սրբազանը եւս վեր առաւ մեր ազգային գլխաւոր կառոյցներուն եկեղեցի, հայ դպրոց եւ հայ մամուլ զիրար ամբողջացնող շղթային կենսական կարեւորութիւնը եւ անոնց ստեղծման առաջին օրերէն ի վեր իրենց մեծ բաժինը բերած ղեկավարներուն, որոնցմէ մեր մէջն է այսօր Դոկտ. Արշաւիր Կէօնճեանը: Ան իր ջերմագին գնահատանքը եւ հայրական օրհնութիւնը տուաւ ազգանուէր այս աշխատանքին:

Երեկոյթին ամբողջ այս առաջին բաժնին ընթացքին, բեմին վրայ զետեղուած լայն պաստառին վրայ շարունակական ընթացքով կը ներկայացուէր խնամքով պատրաստուած ***վիտէօ*** նկարահանում մը որուն մէջ կ'երեւային նմուշներ «Ապագայ»ն 50 տարիներու թիւերէն առնուած էջեր: Կերպով մը անոնց մէջ կ երեւար թէ գանատահայութեան եւ թէ հայ աշխարհի մեծ իրադարձութիւնները եւ ականաւոր դէմքերը: Մասնաւորապէս հոն կ'երեւային «Ապագայ»-ի միւս գլխաւոր հիմնադիրներ՝ վախճանեալ Տոքթ. Յարութիւն Արզումանեանը եւ Երուանդ Ազատեանը, ինչպէս նաեւ ազգային անփոխարինելի իմաստուն բարերար Ալեք Մանուկեանի նկարները:

Այս հանգրուանին ահա ժամանակը հասած էր, և հետեւաբար Տիկին Սալբի Մարկոսեան, գեղեցիկ կերպով ներկայացուց եւ որոտընդոստ ծափերու մէջ բեմ հրաւիրեց բոլորին կողմէ անհամբեր սպասուած, հայ նորագոյն երգերու սիրուած կատարողներէն՝ Հայաստանէն յատկապէս այս առիթով հրաւիրուած տաղանդաշատ Սոֆի Մխեյանը, որ սկսաւ իր ելոյթը ելեկտրականացած մթնոլորտի մը մէջ, հրաշալի կատարողութեամբ երգելով Կոմիտասի անմահ «Հորովելը»:

Այնուհետեւ Սոֆի ակնթարթի մը մէջ անցաւ իր բոլորովին նոր ոճով եւ սակայն միշտ պահելով հայկական հարազատ պարունակութիւնը, երգերու անմրցելի խանդավառութիւն ստեղծող շարքը: Սոֆի Մխեյանը երեկոյթի ամբողջ ընթացքին ցոյց տուաւ իր կարողութիւնը ամբողջ սրահ մը ոտքի պահելու շարունակական պարի, ծափի, շուրջպարի եւ մենապարի մթնոլորտի մը մէջ:

Տիկին Սալբի Հալաճեան-Մարկոսեանը յայտարարեց, թէ պիտի տեղի ունենար 50-ամեայ յոբելեանի աւանդական կարկանդակի հատումը, որուն համար անգամ մը եւս հրաւիրեց Սրբազան Հայրը եւ Տիկին դեսպանը գլխաւորելու երեսունէ աւելի ներկայ կնքահայրերու խումբը: Բնականաբար այնտեղ էին Դոկտ. Արշաւիր Կէօնճեանը ,խմբագիր Աւետիս Պագգալեանը, Թէքէեանի ատենապետ պրն. Նուպար Պապիկեանը եւ ՌԱԿ Էօժէն Բաբազեան ակումբի ատենապետ Արա Պալեանը, որոնք բոլորը լուսարձակներու տպաւորիչ ճառագայթներուն մէջ հասցեցին «Ապագայ»-ի 50 տարիներու վաստակը ներկայացնող գեղեցիկ կարկանդակը: Ներկաները պատրաստ էին սակայն վերադառնալու Սոֆի Մխեյանի առաջնորդութեամբ երգի եւ պարի տօնախմբումին: Այսպէսով սկսաւ տօնական աննախընթաց այս երեկոյթին վերջին բաժինը, ուր Սօֆին որ այլեւս կախարդած էր հանդիսականները իր առինքնող կատարողութեամբ, անմիջապէս վերադարձաւ իր աւելի եւս խանդավառ, մերթ հանդարտ երգերուն: Երեկոյեան ուշ ժամերուն վերջապէս հակառակ ներկաներուն շարունակուող խնդրանքներուն Սօֆին իր նոյն կախարդական դարձուածքներով ելոյթը հասցուց իր աւարտին, ծափերու տեղատարափին տակ:

Անկասկած, Մոնթրէալի հասարակութեան աննախընթաց խանդավառ երեկոյթներէն մէկն էր, որ այսպէսով կ'աւարտէր: «Ապագայ»-ի 50 տարիներու վաստակաշատ յոբելեանը տպաւորիչ կերպով արձանագրուած էր մեր գաղութին տօնարներուն մէջ:

Բարի ոսկեայ տարեդարձ սիրելի «Ապագայ»-ին:

Բոլորին վարձքը կատար:

**Թղթակից**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԴ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ»**
**սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960